

172781ՖԻԶԻԿԱԿԱՆԿՈՒՄՈՒՄՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆՊԵՏԱԿԱՆԻՆ
ՍՏԻՏՈՒՏ

Ս.Ն.ԳԱԼՍՅԱՆ

ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ
ԵՎ ՄՐՑԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

(ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՁԵՐՆԱՐԿ)

Երևան
Հեղինակային հրատարակություն
2015

ՀՏԴ 796.41:796.06

ԳՄԴ 75.6+75.1

Գ 206

Թույլատրվում է հրատարակման ֆիզիկական կուլտուրայի հայկական
նպետական ինստիտուտի գիտական խորհրդի կողմից

Գրախոսներ՝

մ.գ.թ., պրոֆեսոր Ռ.Մ. Խիզանցյան

մ.գ.դ., պրոֆեսոր Բ.Զ. Սաղյան

մ.գ.թ., դոցենտ Ն.Վ. Սելումյան

Գալստյան Ս.Ն.

Գ 206 Սպորտային մարմնամարզության մրցումները և մրցա-
վարությունը: Ուսումնամեթոդական ձեռնարկ
/Ս.Ն. Գալստյան.-Եր.: Հեղ. հրատ., 2014.-152 էջ

Սպորտային մարմնամարզության մրցումները և մրցավարու-
թյունը մարզաձևի կարևորագույն գործընթացներից են: Աշխատանքում ներկայացված է մրցավարական կանոնների ծագումնաբանությունը, մրցումների նախապատրաստումն ու տեսակները, փաստաթղթերը, անցկացումը: Առանձին բաժնով գնահատման կարգն է, ինչպես նաև ֆիզիկական մարմնների վերաբերող նոր հանուր կանոնները: Ձեռնարկում տեղեկատվություն է ներկայացվում միջազգային կազմակերպությունների կառուց-

վածքին, միջազգային խոշոր մրցումներին և նրանցում հայ մարմնամարզիկների մասնակցությանը վերաբերող տեղեկություններ:

Ուսումնական ձեռնարկը նախատեսված է ֆիզիկական կուլտուրայի հայկական նպետական ինստիտուտի, մանկավարժական բուհերի ֆիզիկական դաստիարակության ֆակուլտետի ու սանողների, մարզադպրոցների մարզիչների և մարմնամարզիկների համար:

ՀՏԴ 796.41:796.06

ԳՄԴ 75.6+75.1

ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ

ՖԻԺ-Մարմնամարզության միջազգային ֆեդերացիա
ՀՄՖ-Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիա
ՄՕԿ-Միջազգային օլիմպիական կոմիտե
ՀԱՕԿ -Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե
ՌԻԵԺ-Մարմնամարզության եվրոպական միություն
ՕԽ-Օլիմպիական խաղեր
ԱԱ-Աշխարհի առաջնություն
ԱԳ-Աշխարհի գավաթ
ԵԱ - Եվրոպայի առաջնություն
ԵԳ - Եվրոպայի գավաթ
ԳՄ-Գլխավոր մրցավար
ԳՄՏ - Գլխավոր մրցավարի տեղակալ
ԳՄՀ-Գլխավոր մրցավարական հանձնաժողով
ԳՔ-Գլխավոր քարտուղար
ԱՄ-Ավագ մրցավար
ՄՀ-Մրցավարական հանձնաժողով
ՏԿ-Տեխնիկական կոմիտե
ԱՊՀ - Անկախ Պետությունների Համագործակցություն
ԽՍՀՄ - Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն-
ների Միություն
ԳՖՀ-Գերմանիայի ֆեդերատիվ Հանրապետություն

ՆԱԽԱԲԱՆ

Սպորտային մարմնամարզությունը, որպես մարզաձև կարևոր դերակատարում ունի ֆիզիկական դաստիարակության համակարգում: Մարզաձևի կարևորագույն հիմնահարցերից են մարմնամարզության մրցումները և մրցավարությունը:

Մրցումներն ուսումնամարզական գործընթացի, սպորտային-մասսայական և դաստիարակչական աշխատանքների անբաժանելի մասն են կազմում: Նրանք օգնում են առավել ճիշտ և օբյեկտիվ գնահատել կատարված ուսումնամարզական աշխատանքների որակը, բացահայտել մարզիկի թույլ և ուժեղ կողմերը:

Մրցումները մարմնամարզիկին դրական լիցքեր են հաղորդում, ինչպես նաև հանդես են գալիս որպես միջանձնային շփումների և փորձի փոխանակման հիմնալի միջոց:

Մրցումների ծրագրում իր ուրույն տեղն ունի բազմամարտը, որում ընդգրկված յուրաքանչյուր մրցաձևի վրա կատարվող վարժությունները բազմազան են և միևնույն ժամանակ՝ դիտարժան: Չկա քարոզչության առավել համոզիչ միջոց, քան մարմնամարզական վարժություններն են:

Յուրաքանչյուր մրցում ունի իր նպատակն ու խնդիրները, որոնցից էլ բխում է մրցումների բազմազանությունը: Նրանք դասակարգվում են ըստ ուղղվածության, ստուգարքի, մասշտաբի, ներկայացուցչության և բնույթի:

Մրցումների կազմակերպումն ու անցկացումը բավական բարդ և արհեստավարժ գիտելիքներ պահանջող գործընթաց է: Սպորտային մարմնամարզության յուրաքանչյուր մրցման նախորդում են նախապատրաստական մեծ ծավալի աշխատանքներ: Նախ՝ պլանավորվում է մրցումների անցկացման ձևը, կազմվում են մրցումների ծրագիրը, ժամանակացույցը, հաղորդավարական տեքստերը, ապա ըստ ներ-

կայացվող պահանջների, կարգի է բերվում մրցավայրը, և միայն վերջում կազմակերպիչներն ընդունում են մրցման մասնակից կազմակերպություններին: Այս առումով ձեռնարկը մայրենի լեզվով անդրանիկ աշխատությունն է, որում հանգամանորեն շարադրված են մրցումների մախապատրաստման և անցկացման գործընթացներին առնչվող բազմապիսի կարևորագույն հարցեր:

Մրցումները հնարավոր չէ իրականացնել առանց մրցավարական և գնահատման միասնական կանոնների, կանոններ, որոնք անցել են զարգացման երկար ուղի և հանդիսանում են մարզաձևի առաջընթացն ապահովող գործոններից մեկը: Մրցավարությունը մրցումների անքակտելի՝ փոխկապակցված հիմնախնդիրներից է, որը բավական աշխատատար գործընթաց լինելով հանդերձ, մրցավարից պահանջում է նաև արհեստավարժ մոտեցում բազմամարտի համակցությունները գնահատելելիս: Այս առումով ձեռնարկը կարող է մրցավարների և մրցավարական գործը սովորողների տեսական գիտելիքների հարստացման գործում ուղեցույց հանդիսանալ, քանի որ նրանում տեղ են գտել ժամանակակից մրցավարության կանոններին վերաբերող բազմաթիվ նյութեր:

Այսօր բավականին փոփոխվել են մրցավարական պաշտոնական կուրսերի և քննությունների անցկացման կարգը, ՖԻԺ-ի մրցավարներին վերաբերող ընդհանուր կանոնները, մրցավարական կատեգորիաներ ստանալու, պահպանելու, ինչպես նաև բարձրացնելու, այս կամ այն պաշտոնական մրցումներ դատավարելուն անհրաժեշտ մրցավարական համապատասխան կատեգորիա ունենալու պահանջները: Ձեռնարկում շարադրված և աղյուսակների տեսքով ներկայացված են մրցավարական կատեգորիաներ ձեռք բերել, բարձրացնել, միջազգային պաշտոնական մրցումներ

դատավարել ցանկացող մրցավարներին հուզող շատ հարցեր:

Աշխատությունը հարուստ է նաև օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում հայ մարմնամարզիկների ելույթներին վերաբերող փաստագրական տվյալներով:

Ուսումնական ձեռնարկը բաղկացած է երեք բաժիններից և հինգ՝ միմյանց հետ սերտորեն շաղկապված գլուխներից: Այն նախատեսված է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի, մանկավարժական բուհերի ֆիզիկական դաստիարակության ֆակուլտետների ուսանողների, մարզադպրոցների մարզիչների, սպորտային մարմնամարզության մրցավարների համար:

ԲԱԺԻՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐՄՆԱՄԱՐՁՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՄ ՆԵՐ

ԳՆՈՒՆՄՐՑՈՒՄ ՆԵՐԻՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

1.1. Մրցումներ նշանակությունը

Մարմնամարզության մրցումներն ուսումնամարզական գործընթացի, սպորտային-մասսայական հաստիարակչական աշխատանքների մեթոդաբանական հիմնադրամի վրա են հիմնվում: Նրանք ոգնում են առավել ճշգրիտ և օբյեկտիվ գնահատել որոշակի ժամանակաշրջանում կատարված ուսումնամարզական աշխատանքների որակը, մարմնամարզիկի ֆիզիկական, տեխնիկա-

կան, տակտիկական և հոգեբանական պատրաստությունների մակարդակը:

Հենց մրցումների ընթացքում են բացահայտվում մարզիկի թույլ և ուժեղ կողմերը, բացթողումներն ու ձեռք բերումները, կիրառված տակտիկական քայլերի արդարացված կամ չարդարացված լինելը: Պայքարի այդ ժվարի մայամաններում առավել վառ կերպով են արտահայտվում մարզիկի բարոյական-մային հատկանիշները, բնավորության այս կամ այն կողմերը:

Մրցումները

կարգապահություն, կազմակերպվածություն և պատասխանատվության զգացում հաստիարակելու արդյունավետ միջոցներից են: Լինելով խիստ կանոնակարգված գործընթաց, այն մասնակիցներից պահանջում է անշեղորեն հետևել իր բոլոր կանոններին: Բացի այդ, հաղթանակի հասնելու գործակաճը (հատկապես թիմային պայքարում) նախևառաջ մարզիկի կողմից կարգապահության և կազմակերպվա-

ծուխանդրսևորումն է, սեփականելույթներին կատմամբ պատասխանատվության բարձր զգացում հանդես բերելը:

Հաջողելույթները միշտ էլ մարզիկին դրական լիցքեր են հաղորդում, սեփական ուժերին կատմամբ ամրապնդում վստահությունն ու մտքային անհատականությունը:

Ձախողումները ստիպում են առավել ակտիվ և գիտակցված վերաբերմունք դե-

պիմարզումները՝ կորցրած ընտրելու կամ անհասանելի նհասանելի դարձնելու մղումով:

Մրցումները միջանձնային շփումների և փոխանակման հիմնալի միջոց են, որոնք բարձրացնում են մարմնամարզության ներկայացուցիչների տեսական, մեթոդական և գործնական գիտելիքների մակարդակը: Տարբեր թիմերի (քաղաքների, երկրների) մարզիկները և մարզիչները հնարավորություն են ունենում շփվել միմյանց հետ, իրենց փորձն ու գիտելիքները փոխանակել բարդ տարրերի յուրացման գաղտնիքների շուրջ, ծանոթանալ այսօրու սումնամարզական աշխատանքներում գերիշխող խնդրա-

հարույց հարցերին, գտնել նրանց հաղթահարման ուղիները և կանխորոշել մարզաձևի հետագա զարգացման միտումները:

Մարմնամարզությունում սպորտային վարպետության արդյունքի չափանիշ է հանդիսանում վարժությունների կատարման որակը, այսինքն՝ նրանց տեխնիկայի տիրապետման աստիճանը, որը գնահատվում է բալերով:

Մրցումների ծրագիրն իրենից ներկայացնում է բազմամարտ, որոնցից յուրաքանչյուրի վրա կատարվող վարժությունները բազմազան են և դիտարժան: Այդիսկ պատճառով մարմնամարզության մրցումները քարոզչության համոզիչ միջոց են, որոնք նպաստում են մարզաձևի մասսայականացմանը և հրապուրում բազմազան հազարերեխաների և երիտասարդների պարբերաբար զբաղվել մարմնա-

մարզությամբ: Հրապուրանքի գլխավոր փաստարկ է նաև մրցումներում ելույթ ունեցող մարմնամարզիկների մարզական նրբագեղությունը, մարմնի ներդաշնակ զարգացվածությունը, մկանային ուժը, բարդ տարրերի կատարելիս ցուցաբերած վճռականությունը և համարձակությունը: Այս բոլոր համագամանքները կազմակերպիչներից պահանջում են, որ պեսզի մրցումներն անցկացվեն գեղեցիկ ու բովանդակալից ձևավորված դահլիճներում, իսկ բացման, փակման և հաղթողների պարզ և տրամադրալիկ հանդիսավոր արարողությունները կազմակերպվեն հետաքրքիր՝ համեմված ցուցադրական ելույթներով:

Քարոզչությունն ավելի համոզիչ կդառնա, եթե մրցումները լուսաբանվեն հեռուստատեսությամբ կամ լրատվական այլ միջոցներով:

1.2. Մրցումների տեսակները

Յուրաքանչյուր մրցում ծառայում է որոշակի նպատակների: Կախված տվյալ մրցման նպատակներից, մասշտաբից և բնույթից, մարմնամարզական մրցումները լինում են՝

Ըստ ուղղվածության

✓ Ուսումնական՝ անցկացվում են առանձին ուսումնական խմբերում, ուսուցման այս կամ այն տարվա ուսումնական ծրագրերով:

✓ =

Ընտրական՝ անցկացվում են գլխավոր մրցումներից առաջ՝ մարզումների կամ ուսումնամարզական հավաքների ընթացքում:

Նպատակն է՝ բացահայտել ու ժեղագույնների նհավաքական թիմերը համալրելու համար:

✓ Հանդիպումային՝ կրում են պաշտոնական կամ ընկերական բնույթ կրպես կանոն լինում են ավանդական:

✓ Մասսայական՝անցկացվում են ուսումնական հաստատություններում պարզեցված ծրագրերով: Նպատակն է՝ ընտրել առավել շնորհալիներին դպրոցի սեկցիաներում, մանկապատանեկան մարզադպրոցներում և կամավոր մարզական ընկերություններում պարապելու համար:

Ըստ տուգարքի ձևի

✓ Անհատական՝անցկացվում են բազմամարտից և առանձին մրցածներից՝ յուրաքանչյուր մարզական կարգում առանձին-առանձին: Հաղթող ըրորոշվում է հավաքած միավորներին ընդհանուր գումարով:

✓ Թիմային՝ հաղթող թիմ ըրորոշվում է բազմամարտում հավաքած հաշվարկային միավորների ընդհանուր գումարով՝ տղամարդկանց և կանանց առանձին-առանձին:

✓ Անհատական-թիմային՝ հաղթողներ ըրորոշվում են նաև՝ հատկան, և՛ թիմային հաշվարկով՝ ըստ մարզական կարգերի:

✓ Կուլեկտիվների՝ մրցումներ են կուլեկտիվների միջև, որոնք հանդես են գալիս մի քանի թիմով՝ մանկական, պատանեկան, տղամարդկանց, կանանց և այլն: Լավագույն կուլեկտիվ ըրորոշվում է իր թիմերի ելույթների ընդհանուր արդյունքներով:

Ըստ մասշտաբի

Լինում են համայնքային, քաղաքային, մարզական, հանրապետական, ազգային, միջազգային, որոնք միմյանցից տարբերվում են իրենց ներկայացուցչության բնույթով, որակավորմամբ և այլն:

Ըստ ներկայացուցչության

✓ Տարածքային՝ թիմում կարող են հանդես գալ միևնույն տարածքի, քաղաքի, կամ մարզի ներկայացուցիչները:

✓ Գերատեսչական՝ մրցումներ են կամավոր մարզական ընկերությունների կամ գերատեսչությունների միջև, որոնց կազմում կարող են հանդես գալ տարբեր քաղաքներից կամ մարզերից միևնույն գերատեսչությանը

կամ կամավոր մարզական ընկերության ընդ պատկանող մարմնամարզիկներ:

Ըստ բնույթի

✓ Որակավորման՝ անցկացվում են որակավորման մարզական ծրագրերի նխիտ համապատասխան:

Ցույց տված արդյունքների հիման վրա շնորհվում են մարզական կարգեր:

✓ Ոչ որակավորման՝ անցկացվում են հատուկ ծրագրով մարզական կարգեր չեն շնորհվում:

✓ Փակ՝ այլ քաղաքներից, գերատեսչություններից, մարզերից կամ երկրներից ներկայացուցիչներ չեն կարող մասնակցել:

✓ Բաց՝ թույլատրվում է մասնակցել ներկայացուցիչների այլ քաղաքներից, գերատեսչություններից, մարզերից և երկրներից:

✓ Մրցութային (կոնկուրսային) ըստ մախնական հայտերի, առանձին մրցածներում, առանձին տարրերի և կապակցությունների կատարումով:

✓ Խառը զույգերով՝ բազմափուլ, երկսեռ զուգամրցումներ են, որոնցում զույգերը հանդես են գալիս որպես մեկ թիմ՝ նախապես հայտավորած մրցածներում: Հաղթող թիմը որոշվում է զույգերի հավաքած ընդհանուր գումարով:

✓ Պարզեցված ծրագրերով և կանոններով՝ մրցում են բազմամարտի իրար դեմ ընդհանուր կանոններով կազմակերպված ծրագրերի և մասնակցի կողմից երկու համակցություններից մեկի ընտրությամբ:

✓ Մրցավարության պարզեցված կանոններով՝ առանց հատուկ պահանջների, երկու մոտեցման իրավունքով կայլն:

1.3. Մրցումների փաստաթղթերը

Մրցումները կազմակերպելիս և անցկացնելիս առաջնորդվում են հետևյալ փաստաթղթերով.

մրցավարական կանոններում նշվում

են մասնակիցների, մարզիչների, թիմերի ներկայացուցիչներին մրցավարների հրա-

վում քններն ու պարտականությունները, մրցավարական բրիգադների կազմը, նրանց տեղաբաշխվածությունը գործիքի նկատմամբ, վարժությունների գնահատման եւ արդյունքների հաշվարկման կարգը, սխալների չափը և այլն: Կանոնները թույլ են տալիս մրցավարներին առավել օբյեկտիվ գնահատել մասնակիցների ելույթները, իսկ մասնակիցներին գիտենալու, թե ինչպես պետք է կատարվեն վարժությունները՝ բարձր գնա-

հատական փարժանա մալու համար: Այսպիսով, մրցավարական կանոնները ծրագրա-մեթոդական փաստաթուղթ է, որը հնարավորություն է ընձեռում մարմնամարզիկին մախապես սիմանալ, թետվյալ մրցումներում ինչպիսի պահանջներ են իրեն ներկայացվելու, վարժության ինչպիսի կատարումն է համարվում ճիշտ, թույլ տված այս կամ այն սխալի դեպքում որքան կնվազեցվի գնահատականը և այլն:

Մրցումների կանոնները առումների օրացուցային ալանում նշվում են միջոցառման անվանումը, անցկացման ժամկետները, վայրը, մասնակիցները (տարիքը, քանակը և այլն) և պատասխանատու կազմակերպության անվանումը: Որպես կանոն, այն կազմվում է մեկ տարվա համար:

Մրցումների կանոնադրությունը եկավարող փաստաթուղթ է մասնակիցը լորկազմակերպությունների համար: Այն կազմում է մրցումներն անցկացնող կազմակերպությունը՝ գործություն ունեցող կանոնադրություններին համապատասխան և ուղարկում մասնակիցներին (մարզադպրոցներ, գերատեսչություններ և այլն), ոչ ուշ, քան մրցումներից երեք ամիս առաջ:

Անհրաժեշտության դեպքում, կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ կարող են կատարվել միայն կանոնադրությունը կազմողների կողմից, որոնց մասին մանհա-

պաղտեղեկացվում են մրցումների կազմակերպչական աշխատանքներին առնչվող կազմակերպությունները:

Կանոնադրությունում նշվում են՝

- ✓ մրցումներին պատակը կիսնդիրները,
- ✓ անցկացման վայրը և ժամկետը,
- ✓ մրցումների ղեկավարության կազմը,
- ✓ մրցումների ծրագիրը,
- ✓ մասնակիցների թույլատրման կարգը, տարիքը և թիմերի կազմը,

ազմը,

- ✓ արդյունքներին ամփոփման պայմանները,
- ✓ պարգևատրման պայմանները,
- ✓ ֆինանսավորման պայմանները,
- ✓ մասնակիցների և հանդիսականների անվտանգության ապահովման կարգը,

պահովման կարգը,

- ✓ մասնակիցների ապահովագրությունը,
- ✓ հայտերի ներկայացման կարգը:

Ամեն տեսակի հակասական կարծիքները բացառելու պատահ-

կով, կանոնադրության բոլոր կետերը շարադրվում են պարզ, հսկի ընդհանգամանորեն:

Մրցումներին պատակը կիսնդիրները. Կախված մրցումների բնույթից, մասշտաբից և մասնակիցների վարպետության աստիճանից, մրցումները կարող են հետապնդել տարբեր պատակներ կիսնդիրներ: Օրինակ՝ ուսումնական տարվա ընթացքում կամ վարտին կատարված ուսումնամարզական աշխատանքների ամփոփումը, հավաքական թիմերի համալրելուն պատակով ու ժողագույնների բացահայտումը, հավաքական թիմերի սպորտային վարպետության բարձրացումը և այլն:

Անցկացման վայրը և ժամկետը. Նշվում են մրցավայրի հասցեն, մարզական առույցի անվանումը և անցկացման ժամկետն առա-

վել կոնկրետ, քան նախատեսված է մրցումների խորացու-
ցային պլանով:

Մրցումների հղեկավարությունը: Նշվում է այն կազմակեր-
պությունը, ում վրա դրված է
մրցումների կազմակերպչական աշխատանքները: Վերջինս նշան-
ակում է իր ներկայացուցչին, ով հանդես է գալիս որպես մրցումների կ-
ազմակերպման և անցկաց-
ման պատասխանատու, սակայն անմիջական ղեկավա-
րումն իրականացվում է գլխավոր մրցավարի կողմից:

Մրցումների ծրագիրը: Շատ մրցումներ անցկաց-
վում են որակավորման ծրագրով, որը տղամարդկանց մոտ վեց մրց-
ածն է, իսկ կանանցը՝ չորս:

Կանոնադրությունում պետք է նշվեն, թե ինչ ծրագրով, մար-
զական որակագրքով պետք է անցկացվեն մրցումները, կլինի պար-
տադիր, թե՞ կամավոր ծրագիր, կլինե՞ն արդյոք զրափակիչ մրցում-
ներ, եթե այո, ապա ինչ պիսին
(թիմային, բազմամարտկամառանձին մրցաձևերի եզրափակիչնե-
ր):

Հաճախ անցկացվում են նաև չորակավորման մրցում-
ներ, որոնց ծրագիրը պետք է կցվի կանոնադրությանը: Այս մրցումնե-
րից են պարզեցված ծրագրով կամ մրցավարական կանոն-
ներով մրցումները, կոնկուրսները և այլն:

Մասնակիցների թույլատրման կարգը,
տարիքը և թիմերի կազմը: Բաժնու մենշվում են, թե որ կազմակերպությ-
ունները, մաս-
նակիցների ինչքանակով կարող են մասնակցել տվյալ մրցում-
ներին: Բացի մասնակիցներից, պատվիրակությունների կազմումը
նդգրկվում են նաև թիմի ներկայացուցիչը, մրցավարներ,
մարզիչներ, բժիշկ, մերսող: Նշվում է
նաև թիմերի կազմը, հաշվարկային միավորներ տալու կարգը,
յուրաքանչյուր մարզական կարգից (երկրից)

եզրափակչին մասնակցելու իրավունք ունեցող մարզիկների քանակը նայլն:

Թիմի կազմում կարող է ընդգրկվել մինչև 6 մարմնամարզիկ: Առանձին դեպքերում, մրցումներին թույլատրվում է մասնակցել նաև հաշվարկից դուրս մարզիկների:

Թիմային որակավորման մրցումներում հաշվարկային միավորներ են համարվում՝ յուրաքանչյուր մրցաձևում թիմի 4 մարզիկներից ույց տված արդյունքներից ավագույն 3-ը, իսկ եզրափակիչում՝ 3-ից 3-ը:
Այս համամասնությունը տարբեր մրցումներում կարող է լինել տարբեր:

Մեծահասակների խոշոր մրցումներին թույլատրվում է մասնակցել 16 տարեկան մարմնամարզիկ-մարմնամարզուհիների (ՕԽ-ին նախորդող աշխարհի առաջնության ընթույլատրվում է մասնակցել նաև 15 տարեկան մարմնամարզուհիների): Մասնակցի տարիքը որոշելիս, կարևորվում է միայն ծննդյան տարեթիվը:

Մասնակիցների տարիքն ըստ մարզական կարգերի

ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ	ԿԱՆԱՅՔ	ՏՂԱՄԱՐԴԻԿ
Ուկրաինական	7 տարեկան և ցածր	7 տարեկան և ցածր
Ուկրաինական	7 տարեկան և ցածր	8 տարեկան և ցածր
Լադոնական	8 տարեկան և ցածր	9 տարեկան և ցածր
Ունեծահասակներ	8 տարեկան և ցածր	10 տարեկան և ցածր
Ունեծահասակներ	9 տարեկան և ցածր	11 տարեկան և ցածր
Լնեծահասակներ	10 տարեկան և ցածր	12 տարեկան և ցածր
սպորտի վարպետի թեկնածու	12 տարեկան և ցածր	14 տարեկան և ցածր
սպորտի վարպետ	14 տարեկան և ցածր	16 տարեկան և ցածր

Արդյունքների համփոփման պայմանները: Թիմային առաջ-
նության հաղթողը որոշվում է յուրաքանչյուր մրցաձևում, թիմի ան-
դամների միայն հաշվարկային միավորների գումարով: Եզրա-
փակիչ մրցումների մասնակիցները որոշվում են որակավոր-
ման մրցումներում: Խոշոր մրցումներում (օլիմպիական խաղեր, աշ-
խարհի առաջնություն) հաղթողները որոշվում են հետևյալ կերպ.

Թիվ 1՝ որակավորման մրցումների մասնակցում են հայտա-
վորված բոլոր թիմերը և անհատական մասնակիցները, որոնցում
որոշվում են թիմային, բազմամարտիկ առանձին մրցա-
ձևերի եզրափակիչների մասնակիցները:

Թիվ 2՝ բազմամարտի եզրափակիչում մասնակցում է 24 մարմ-
նամարզիկ, յուրաքանչյուր երկրից առավելագույնը 2 մասնակից: 4
մասնակիցն ախտաեսվում է որպես պահեստային:

Այս տեղորոշվում են բազմամարտի մրցանակակիրները և բացարձ-
ակ հաղթողը:

Թիվ 3՝ առանձին մրցաձևերի եզրափակիչում, յուրա-
քանչյուր ձևում մասնակցում է 8 մարզիկ, յուրաքանչյուր երկրից՝ 2-
ը: Պահեստայինների թիվն այս տեղ 3-ն է: Որոշվում են յուրա-
քանչյուր մրցաձևի հաղթողը և մրցանակակիրները:

Թիվ 4՝ թիմային եզրափակիչում, որտեղ մասնակցում է 8 թիմ, ո-
րոշվում են հաղթող և մրցանակակիր թիմերը:

Հաղթողների և մրցանակակիրների նպարդևատրելի սիմվոլա-
վի են առնվում, թե՛ ինչպիսի մրցանակներով, ինչի համար կունենան
էպարդևատրել թիմային⁰ մ, թե՛ անհատական առաջնու-
թյան համար, հաղթողի⁰ մ, թե՛
մրցանակակիրին: Սովորաբար թիմային առաջնություններում տղա-
մարդկանց կանանց պարզևատրում են առանձին-
առանձին, անհատական առաջ-
նություններում՝ ըստ տարիքային խմբերի կամ ըստ մարզական կա-
րգերի:

Անհրաժեշտ նկատի

առնել նաև այն, որ մարզիկները կամ թիմերը ըցույց տալով միևնույն արդյունքը, ոչ թե կիսում, այլ գրավում են միևնույն մրցանակային տեղը: Հետևաբար, եթե վավագույն արդյունքը պատկանում է երկու մարզիկի, ապա նրանք երկուսն էլ զբաղեցնում են առաջին տեղը, իսկ նրանց հաջորդողը՝ 3-

րդ: Շատ հաճախ զավթիկ կամ այլ մրցանակի փառարկման մանահնարին է

դառնում պարզևատրել երկու հաղթողներին՝ ունենալով մեկ օրինակ զավթիկ կամ մրցանակ: Այդ դեպքում կանոնադրությունում անհրաժեշտ է նախատեսել հավելյալ այնպիսի պայմաններ, որոնք առավել ություն կտան նրանց ից միայն մեկին: Օրինակ՝ բազմամարտում որոշ իջգործոն կարելի է համարել այն, թե ում հավաքած միավորներն են առավել բարձր ղեղել բազմամարտի որակավորման (նախ-նական) մրցումներում, իսկ առանձին մրցաձևերում՝ առավել բարձր ղտվյալ մրցաձևում:

Ֆինանսավորման պայմանները: Նշվում են այն կազմակերպությունները, որոնք ֆինանսավորում են մրցումները: Դրանք կարող են լինել պետական մարմիններ, բարեգործական կամ ձեռնարկատիրական ընկերություններ, բարերարներ և այլն, ինչպես առանձին, այնպես էլ համատեղ ֆինանսավորմամբ: Պետական ֆինանսավորումը կատարվում է սպորտինախարարության կողմից՝ ըստ միջոցառումների տարեկան պլանով նախատեսված բյուջե տալիս ծախսերի:

Մրցումների կազմակերպման և մեցկացման հետևյալ ված բոլոր ֆինանսական ծախսերն իրականացվում են կազմակերպիչների կողմից: Մասնակիցների գործուղման ծախսերը (ճանապարհածախս, օրապահիկ, սնունդ, գիշերավարձ և ապահովագրություն) հոգում են գործուղող կազմակերպությունները:

Մասնակիցների և հանդիսականների հանվտանգության ապահովումը:

Ելնելով հասարակական կարգի պահպանման, մասնակիցների հանդիսականների անվտանգության ապահովման հարցերի կարևորությունից, մրցումները պետք է անցկացվեն տվյալ երկրի հրավերական ակտերով ընդունված նորմատիվային պահանջների համապատասխանող օբյեկտներում:

Մասնակիցների ապահովագրությունը. Մրցումների մասնակցության իրավունք ստանալու կարևոր նախապայման է նաև դժբախտ պատահարներից կյանքի և առողջության ապահովագրության պայմանագրի առկայությունը, որը ներկայացվում է մրցումներին մասնակցելու լատրոդիան ծնածո ղուվին (մանդատային հանձնաժողով) ժամանման օրը:

Հայտերի ներկայացման կարգը. Նախնական հայտերն ուղարկվում են ներկայացվում են մրցումներից 30 օր առաջ: Անվանական հայտերը ներկայացվում են մրցումներից ամենա ուշը 24 ժամ առաջ:

Խոշոր մրցումներին մասնակցության հայտերը Ֆիժբարտուղարություն են ուղարկվում մրցումներից 5 ամիս առաջ: Հայտերը չուղարկելու կամ ուշացնելու դեպքում մուծվում է տուգանք՝ Ֆիժբարտուղարի կողմից սահմանված գումարի չափով: Վերջնական հայտերը զիջարտուղարին են ուղարկվում մրցումներից 3 ամիս առաջ: Վերջնական հայտերում նկարող են կատարվել փոփոխություններ (թիմը փոխարինել անհատական մասնակցով կամ հակառակը): Մարմնամարզիկների, պահեստայինների, մարզիչների, մրցավարների և պաշտոնատարայլան ծանցանվանական հայտերը քարտուղարություն են ներկայացվում մրցումներից 4 շաբաթ առաջ:

ԳԼՈՒԽ ԶՄՐՑՈՒՄՆԵՐԻՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Մրցումներին մասնախորդում են մասնապատրաստական մեծ ծավալի աշխատանքներ, որոնց ժամանակին կոտորված տարելուց է կախված նրանց հաջողանց կացումը:

Մրցումներին մասնապատրաստական և կազմակերպչական աշխատանքների համար ձևավորվում է կազմակերպչական աշխատանքների պարտականությունները դրվում են մրցումներն անցկացնող կազմակերպության հաստիքային աշխատողներից որևիցե մեկի վրա: Ցանկալի է այդ աշխատանքներում ներգրավել մասնագետ-գլխավոր մրցավարի, որը միջազգային պրակտիկայում կոչվում է մրցումների տնօրեն:

Մրցումներն անցկացնող կազմակերպությունը պարտավոր է.

- մրցումներին մասնակից կոլեկտիվներին ժամանակին ուղարկել մրցումների կանոնադրությունը,
- ընտրել մրցումների կանոնադրության բոլոր պահանջներին և մասշտաբին համապատասխան դահլիճ,
- ժամանակին մասնապատրաստել սարքավորումները, մամուլային արձանագործիքները, գույքը և տեղադրել մրցավայրում,
- լուծել այլ քաղաքներից ժամանած մարզիկների տեղավորման, սննդի և տեղափոխման հարցերը,
- ստեղծել միջարժեքի ատոմս՝ մանդատային, տնտեսական, բժշկական, մշակութային սպասարկման հանձնաժողովներ,
- տեղական մրցավարական հանձնաժողովին հայտնելու կայացնել ժամանակին նշանակելու մրցումների գլխավոր մրցավարին և մրցավարներին:

Խորհուրդ է տրվում նշանակել մրցումների կազմակերպման և անցկացման օրացուցային պլան: Եթե, ըստ մրցումների կանոնադրու-

վում են գլխավոր նրցավարական հանձնաժողովի կամ նրատարբեր բաժինների պատասխանատուների կողմից:

Երրորդ ժամանակաշրջանում մասնակից կոլեկտիվների ներկայացուցիչների հետանց կացվում են խորհրդակցություններ, ստուգվում են տեխնիկական սարքավորումների համարման արժեքները, գործիքների հուսալիությունը, անց կացվում է փորձամրցում:

2.1 Մրցումների պլանավորումը

ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Թիմերի մուտքը նրցահարթակ կարելի է պլանավորել միաժամանակյակ ամրաստ հերթականության կարգով: Թիմերը մրցումների նկարագրող են մասնակցել մի քանի հերթափոխով կամ մի քանի հոսքով: Սովորաբար մրցումներն անց կացվում են միաժամանակյա մուտքով: Տվյալ մրցաձևի ավարտից հետո որ-

և որ թիմերը միաժամանակ անցնում են հաջորդ մրցաձև, որը շարունակվում է այնքան, որքան մրցաձև կա բազ-

մամարտում: Այսպիսով, նույն հերթափոխի թիմերը սկսում են ավարտում են մրցումները բոլոր մրցաձևերի վրա միաժամանակ:

Տղամարդկանց վեց ամարտում են կձևից մյուսին անցման հաջորդականությունը հետևյալն է՝ ազատ վարժություններ, թափանժույզ, օղակներ, հենացատկեր, զուգափայտ, պտտաձող: Իսկ կանանց քառամարտում՝ հենացատկեր, տարբեր բարձրություն զուգափայտեր, մարմնամարզական զգեստներ, ազատ վարժություններ:

Կանանց թիմերի գործիքների անցման ժամանակացույցը կլինի հետևյալը.

Թիվեր	Ժամանակ				
	10.00	10.25	10.50	11.15	11.40
1	հենացատկեր	տ/բ զուգա- փայտ	մարմնամ. գերան	ազատ վարժութ.	մրցումներ հավաքող
2	տ/բ զուգա- փայտ	մարմնամ. գերան	ազատ վարժութ.	հենացատ կեր	
3	մարմնամ. գերան	ազատ վարժութ.	հենացատ- կեր	տ/բ զու- գափայտ	
4	ազատ վարժութ.	հենացատ- կեր	տ/բ զու- գափայտ	մարմնամ. գերան	

Եթե անհրաժեշտ է, որպեսզի մրցումներին միաժամանակ մասնակցող թեչորսայլ հինգ թիմ, ապա ժամանակացույցում հինգ երրորդ թիմ ի առջև կետք է նշվի «չիմասնակցում»: Տվյալ թիմը բաց է թողնում մեկ մրցաձև, որից հետո ով երեսուցում մրցումները: Այս դեպքում ժամանակացույցը կլինի հետևյալը.

Թիվեր	Ժամանակ					
	10.00	10.25	11.50	11.15	11.40	2.05
1	հենա- ցատկեր	տ/բ զու- գափայտ	մարմնամ. գերան	ազատ վարժութ.	չիմաս- նակցում	մրցումներ հավաքող
2	տ/բ զու- գափայտ	մարմնամ. գերան	ազատ վարժութ.	չիմաս- նակցում	հենացատ կեր	
3	մարմնամ. գերան	ազատ վարժութ.	չիմաս- նակցում	հենա- ցատկեր	տ/բ զուգա- փայտ	
4	ազատ վարժութ.	չիմաս- նակցում	հենա- ցատկեր	տ/բ զու- գափայտ	մարմնամ. գերան	
5	չիմաս- նակցում	հենա- ցատկեր	տ/բ զու- գափայտ	մարմնամ. գերան	ազատ վարժութ.	

Նմանեղանակով տղամարդկանց մրցումներում մավելացվում է յոթերորդ թիմը:

Այսպիսի ժամանակացույց կարելի է կազմել միայն այն դեպքերում, երբ բնականորեն բերական: Հավելյալ թիմերի ընդգրկումը մեկեր թափոխում հանգեցնում է անցանկալի դադարների: Մասնակիցները դուրս են գալիս նորմալ ռիթմից, ստեղծվում

են մրցակցային անհավասարապայմաններ: Այս դեպքում դադարն առաջին կամ վերջին մրցաձևերում մավելի ծեռն տուկարող է լինել, քան մրցումների միջև ամասի մյուս մրցաձևերում: Բացի այդ, հավելյալ թիմի առկայության դեպքում անխուսափելի կլինեն մրցումների արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ոչ ազդեցությունը, ինչը ճիշտ է իարտացուլի պայքարի հրական պատկերը տվյալ պահին:

Ըստ հերթականության մրցա հարթակ է դուրս գալիս մեկ թիմ, որն անցնելով հաջորդ մրցաձև՝ դուրս է գալիս հաջորդ թիմը և այդպես շարունակ: Թիմերը մրցումներն ավարտում են նույն պեսը ստի հերթականությամբ: Մի մրցաձևից մյուսին անցման կարգը բոլորի համար նույնն է կոյուրին է հաշվարկելը այն

մասնակիցների կամ թիմերի արդյունքները, ովքեր ավարտել են մրցելույթները: Սակայն այս տարբերակը ժամանակատար է կոժվարեցնում է անհատական-

թիմային առաջնություններում արդյունքների տեղեկատվությունը:

Թիմեր	Ժամանակ						
	10.00	10.30	11.00	11.30	12.00	12.30	13.00
1	ազ. վարժ.	թափա-նժույգ	օղակներ	հենա-ցատկ	զուգափ.	պտտա-ծող	-
2	-	ազ. վարժ.	թափա-նժույգ	օղակներ	հենա-ցատկ	զուգափ.	պտտա-ծող
3	-	-	ազ. վարժ.	թափա-նժույգ	օղակներ	հենա-ցատկ	զուգափ.
4	-	-	-	ազ.	թափա-	օղակներ	հենա-

				վարժ.	նժույգ		ցատկ
5	-	-	-	-	ազ. վարժ.	թափա- նժույգ	օղակ- ներ
6	-	-	-	-	-	ազ. վարժ.	թափա- նժ.

Հոսք: Մրցումների անցկացման համար անհրաժեշտ է որոշա-
կի քանակի գործիքների
հավաքածու: Թիմերը, որոնք մրցում են միևնույն հավաքածու գործի-
քների վրա, ընդունված է անվանել ի հոսք: Մեծ թվով մասնակիցների
առկայության դեպ-
քում դա հիշճու մկարել ի է տեղադրել մի քանի հավաքածու գոր-
ծիքներ և մրցումներ անցկացնել մի քանի հոսքով: Հասկանալի է, որ
այս կերպ մրցումներ անցկացնելու համար անհրաժեշտ է մեծ դահլ-
ի ճ, անհրաժեշտ քանակի գործիքներ և մրցավարա-
կան հանձնաժողովի մեծ կազմ: Եթե մրցումներ անցկացվում են մա-
րզական ցածր կարգերով, ապա ազատ վարժությունների մեկ հարթ-
ակին կարելի է անցկացնել երկու հոսքով մրցումներ: Այն ժամանակ,
երբ մրցավարական բրիգադների ցմեկ ըզբաղված է գնահատակա-
նի հաշվարկով, մյուս ըզբաղվում է վար-
ժությունը գնահատելով կամ հակառակը: Բարձրակարգ մրցումներ
անցկացվում են մեկ հոսքով: Սակայն առանձին ձևերի եզրափակի
չմրցումները, որ տեղի հանդես են գալիս և՛ տղամարդիկ, և՛ կանայք, ա-
նցկացվում են երկու հոսքով:

Հերթափոխ: կոչվում է բազմամարտի մրցումների ավարտ-
ված հերթական ցիկը, որին թիմերը մասնակցել են միա-
ժամանակյա մուտքով:

Յուրաքանչյուր հերթափոխին, բոլոր թիմերի մասնակ-
ցությունը հերթական մրցաձևերի վրա կոչվում է փոքրի եր-
թափոխ (пересменка):

Եթե մրցումներ անցկացվելու են փոքր դահլիճում և անհնար է
տեղադրել բազմամարտի բոլոր մրցաձևերը միաժամանակ,

ապակարելի է անցկացնել նախերեքմրցաձևերի, այնուհետև երատեղադրելով մարմնամարզական գործիքները՝ անցկացնել հաջորդմրցաձևերի մրցումները: Այսպիսի փոքրիկ երթափոխներով մրցումներ կարելի է ծրագրավորել միայն մասնակիցների փոքր քանակի դեպքում: Դրա հետ մեկտեղ, այս տարբերակը կապահանջի հավելյալ ժամանակ գործիքները վերատեղադրելու համար:

Բացն փակ մրցավարություն: Բացմրցավարության դեպքում մեն մրցավար ցուցադրում է իր գնահատականը, որից հետո ԱՄ-ը հայտարարում է վերջնական գնահատականը: Փակ մրցավարության ժամանակ մրցավարները գրանցում են միջապես փոխանցում են գնահատականը ԱՄ-ին, իսկ վերջինս՝ ցուցադրում է վերջնական գնահատականը:

ՄԵԿՆԵՐԹԱՓՈԽԻՆ ՏՐԱՍԱԴՐԿՈՂԺԱՍԱՆԱԿԸ

Հերթափոխի ժամանակը սահմանելու համար անհրաժեշտ է հաշվարկել, թե որքան ժամանակ է անհրաժեշտ թիմերին ավարտելու ելույթները մեկ մրցաձևում: Հաշվարկելիս պետք է նախատեսել.

- թիմերի

մուտքը մրցահարթակ կնոտեցումը մրցման առաջին մրցաձևին՝ 12 0վրկ,

- անցումը մի մրցաձևից մյուսին՝ 60 վրկ,

- յուրաքանչյուր մասնակցին ախավարժանքին՝ 30 վրկ (զուգափայտին՝ 50վրկ),

- մարզիկին ելույթի հրավիրելը և գործիքին մոտենալը՝ 30 վրկ,

- մեկ մարզիկի վարժության կատարման ժամանակը (տղամարդկանց համար 60-70վրկ, կանանցը՝ 80-90վրկ),

- ելույթի գնահատումը գնահատականի ցուցադրումը՝ 50-60 վրկ,

- մոտեցումների ընդհանուր ժամաքանակը (հենացատկերում՝ կրկնակի):

Անհրաժեշտ է հաշվառել այն հանգամանքը, որ բարձր կարգային մարզիկներին մրցումներն ավելի երկար են տևում, քան ցածր կարգայիններինը:

Սպորտի վարպետների ցքադ-կացած վեց հոգանոց թմին, յուրաքանչյուր մրցաձևի վրա անհրաժեշտ կլինի 20 -25 րոպե, իսկ ութ հոգանոց թմի դեպքում՝ 25 -30 րոպե: Եթե այս վերը բազմապատկենք բազմամարտի ձևերի քանակին, կստացվի մեկ հերթափոխին տրամադրվելիք ժամանակը:

Հետևապես, կանանց վեց հոգանոց թմերի մեկ հերթափոխին մրցումները կարելի է անցկացնել 1 ժ 20 րոպեից 1 ժ 40 րոպե ժամանակում, իսկ տղամարդկանցը՝ 2 ժ - ից 2 ժ 15 րոպե:

Ժամանակ կանհրաժեշտ է պլանավորել բավականին ճշգրիտ: Անհրաժեշտ է նաև հիշել, որ սխալ պլանավորված ժամանակ կանհնարին կլինի մրցումների ընթացքում ուղղելառանց զգալի վնասների: Մինև ոյն ժամանակ, նախատեսված ժամանակը ցանկացած պատճառով ձգձգելը կամ խտացնելը անթույլատրելի է, քանի որ այն բացասաբար կանդրադառնա մասնակիցների ելույթների վրա:

ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԲԱՇՆՈՒՄՆԸ ՍՕՐԵՐԻ

Մրցումների ծրագիրն ըստ օրերի բաշխվում է մրցումների կանոնադրության համաձայն: Նկատի է առնվում՝ ա) որքա՞ն թիմեր կան միևնույն տարիքի մասնակիցներ պետք է ելույթ ունենան, բ) ըստ տարիքային խմբերի կամ մարզական կարգերի, որքա՞ն թիմեր ու մասնակիցներ քանակը (աղջիկ, տղա): Ան-

հրաժեշտ է հաշվի առնել նաև մրցավայրի հինարավորությունները
(դահլիճի չափերը, անհրաժեշտ քանակով մարզագույքի առկայությունը և այլն):

Սովորաբար մրցումներն անցկացվում են հետևյալ կերպ՝

- որակավորման մրցումներ,
- թիմային եզրափակիչ,
- բազմամարտի եզրափակիչ,
- առանձին ձևերի եզրափակիչ:

Փոքր մասշտաբի մրցումները կարելի է անցկացնել մեկ օրում
և ցույց տված արդյունքների հիման վրա որոշել հաղթող թիմին, բազմ
ամարտի հաղթողին մրցաձևերի հաղթողներին:

Կամ, առաջին օրը որոշվում են թիմային բազմամարտի հաղ-
թողները, իսկ երկրորդ օրը՝ առանձին մրցաձևերի հաղթողները:

Եթե մրցումների ժրագրովն ավատեսված է որակավոր-
ման եզրափակիչ մրցումներն անցկացնել առանձին-առան-
ձին, ապա նպատակահարմար է
ըստ օրերի դրանք բաշխել հետևյալ կերպ՝

I օր՝ որակավորման մրցումներ (տղամարդիկ),

II օր՝ որակավորման մրցումներ (կանայք),

III օր՝ թիմային եզրափակիչ (տղամարդիկ),

IV օր՝ թիմային եզրափակիչ (կանայք),

V օր՝ բազմամարտի եզրափակիչ (տղամարդիկ),

VI օր՝ բազմամարտի եզրափակիչ (կանայք),

VII օր՝ առանձին մրցաձևերի եզրափակիչ՝ տղամարդկանց
3, կանանց՝ 2 ձևերից, կամ առաջին հերթափոխում տղամարդիկ,
երկրորդում՝ կանայք:

VIII օր՝ առանձին մրցաձևերի եզրափակիչ՝ տղամարդ-
կանց 3, կանանց՝ 2 ձևերից, կամ առաջին հերթափոխում տղա-
մարդիկ, երկրորդում՝ կանայք:

Դահլիճի հինարավորություններից ելնելով կամ տղամարդ-
կանց ու կանանց երկու հավաքածու մարզագույքի առկա-

յությանդեպքում,
թիմերը կարող են մասնակցել միաժամանակ երկու հերթափոխով, ի
նչը ժամանակը կրճատի չորս օրով:

ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Մրցումների ժամանակացույցով նախատեսվում է գործիք-
ների փորձարկման, յուրաքանչյուր հերթափոխից առաջ նա-
խավարժանքի, բազմամարտի մեկ մրցաձևից մյուսին անցնելու,
ելույթների, բացման և փակման արտողությունների ժամանակը:

Ժամանակացույցը կազմելիս անհրաժեշտ է ճշգրտել թիմերի,
անհատական մասնակիցների նմարմնամարզական գործիքների
քանակը,
մրցավայրի հնարավորությունները և մրցավարական հանձնաժող
ովի կազմը, ինչպես նաև հաշվառնել, թե ինչպիսին է մրցումների ծր
ագիրը և ստուգարքի ձևը:

Անհատական - թիմային մրցումներում յուրաքանչյուր կազ-
մակեր-

պությունից սովորաբար մասնակցում են եկ, հաճախ նաև երկու թիմ: Լ
ավէ, երբ թիմերը մեծ չեն

հարկ չի լինի նրանց հարկադրաբար բաժանել: Պատահում է նաև,
որ յուրաքանչյուր կազմակերպություն երկայացնում է 2 -ից 3 մաս-
նակցի: Այդ դեպքում նրանց 2 - 3 թիմերի ցվի ձևակահանու-
թյամբ ընտրված և սմիք մի մարզիկների, միավորում են մեկ թիմում:

Կոլեկտիվ

-
թիմային մրցումներն ըստ էության, իրենցից մի քանի իմ քնուրույն մր-
ցումներ են ներկայացնում: Օրինակ՝ կոլեկտիվները մրցում են՝ ա)
կանանց և տղամարդկանց թիմերով, բ) որոշակի որակավոր-
ման մարմնամարզիկներից համալրված թիմերով, գ)
այս կամ այն տարիքային խմբերի մարմնամարզիկներով:

Այս բոլոր դեպքերում կոլեկտիվի հավաքած ընդհա-

նուրմիավորներին են փոխանցվում յուրաքանչյուր մրցման ստուգաբային միավորները:

Հաճախ կազմակերպությունները հայտավորում են մեծ թվով մասնակիցների, որոնց հնարավոր է ընդգրկել մեկ թիմում: Այս դեպքում, որոշ մարզիկներ կարելի է առանձնացնել իրենց հիմնական թիմից և նրանց կազմել մեկ հավաքակազմ թիմ: Թիմերի բաշխումը կամ վերաբաշխումը կատարվում է միայն գլխավոր մրցավարի կողմից, այն էլ խիստ անհրաժեշտության դեպքում:

Անհատական և եզրափակիչ մրցումներում (ոչ թիմային հաշվարկով) մասնակցում են առանձին խմբեր, որոնք ներկայացնում են այս կամ այն կազմակերպությունը:

Խմբերը ձևավորվելով, հայտնի է դառնում նրանց ընդհանուր քանակը, որը թույլ է տալիս նրանց հավասարաչափ բաշխել ըստ հոսքերի: Այսպես, տղամարդկանց 12 թիմերի և բազմամարտի 6 գործիքների առկայության դեպքում, խմբերը կամ թիմերը հավասարաչափ բաշխվեն 2 հերթափոխում: Իսկ եթե թիմերն ավելի շատ են, օրինակ՝ 15, ապա մատակահարմար կլինի նրանց բաշխել 3 հերթափոխերում, յուրաքանչյուրում՝ 5 թիմ: Ոչ մի դեպքում էլ կարելի է 1 հերթափոխում ընդգրկել 8 թիմ, եթե նույնիսկ ժամանակի խնայողության տեսակետից այն արդարացված չլինի:

Այսպիսով, սահմանելով թիմերի և հերթափոխերի քանակը, կարելի է կազմել մրցումների ժամանակացույց ըստ օրերի: Ըստ ժամանակացույցի, յուրաքանչյուր հերթափոխում անհրաժեշտ է ժամանակ տրամադրել գործիքների փորձարկմանը, մրցումների բացման, փակման և պարզևատրման հանդիսավոր արարողություններին:

Մրցումների սկիզբը պետք է նախատեսել առավոտյան ժամը 10⁰⁰ -ից ոչ ուտ, իսկ ավարտը՝ 22⁰⁰-ից ոչ ուշ (պատահական մրցումներում ժամը 21⁰⁰-ից ոչ ուշ):

Թիմային առաջնություններում սովորաբար թիմերն ըստ հերթափոխերի բաշխվում են այն արդյունքների հիման վրա, որոնք ցույց են տվել նախորդ՝ նույն անուն մրցումներում: Լավագույն արդյունքների հասած թիմերը ելույթ են ունենում վերջին հերթափոխում, առավել ցածր արդյունքներ գրանցածները կամբողջովին չմասնակցածները՝ առաջինում:

Թեբազմամարտի որոշ կից կսկսեն թիմերը, նույն պետք չէ վումբ է ցույց տված նախորդ մրցումների արդյունքների հիման վրա, կամ վիճակահանությանը: Եթե մրցումներն անցկացվում են առաջին անգամ, հերթականությունը որոշվում է ըստ վիճակահանության:

Թիմում յուրաքանչյուր մասնակցի ելույթը սկսելու հերթականությունը որոշում է տվյալ թիմի ղեկավարությունը: Եթե խմբումը նդգրկված են տարբեր կազմակերպության ներկայացուցիչներ, ապա առաջին մրցածնում մոտեցումների հերթականությունը որոշվում է կազմակերպությունների միջև վիճակահանությանը: Առաջին մոտեցողը, երկրորդ ձևում մոտենում է վերջինը, իսկ երկրորդը՝ առաջինը նայապես շարունակ:

Թիմային մրցումներում, երբ միևնույն թիմումը նդգրկված են մարմնամարզիկներ տարբեր կազմակերպություններից, առաջին մրցածնում վիճակահանությունը կատարվում է ոչ թե մասնակիցների, այլ կազմակերպությունների միջև: Մրցումների երկրորդ մրցածնում առաջինը ստում է այն կազմակերպության մարմնամարզիկը, ով առաջին մրցածնում երկրորդն էր սկսել նայապես շարունակ:

Բազմամարտի եզրափակիչ մրցումներում, առաջին մրցածնին յուրաքանչյուր մասնակցի մոտեցման հերթական

նությունը որոշվում է վիճակահանությամբ, երկրորդ մրցածուները
լիքը սկսում է ցուցակում երկրորդը, իսկ առաջինը՝ վերջինը նալը: Վի
ճակահանությունը կատարվում է նախօրոք՝ որակավոր-
ման մրցումներում գրաված տեղերի հիման վրա:

Առանձին ձևերի եզրափակիչում,
յուրաքանչյուր մրցածու հիմամբ կատարվում է առանձին
վիճակահանություն կամ հիմնվում են որակավոր-
ման մրցումներում տվյալ մրցածու մրցանցված արդյունքների վրա:

Վիճակահանությունները որպես կանոն կատարվում են թիմե-
րիղեկավարների խորհրդակցության ժամանակ՝ մրցում-
ները սկսվելուց անմիջապես առաջ:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐԱԿԱՆՏԵՔՍՏԵՐԸ

Տեղեկատվությանը նդի հանուր պլանը հաղորդավարական
տեքստերը, որոնք կարդում է տեղեկատու մրցավարը, մշակվում են
մինչև մրցումները:

Համաձայնեցնելով գլխավոր մրցավարի հետ, տեքստերը հա-
մարակալվում են նըստի աջողականությանը նդ գրկվում հաղորդ-
ավարական պլանում, որպես զի մրցման յուրաքանչյուր օրվա որոշ
ակի ժամերի, այս կամ այն տեքստը կարդացվի:

Տեքստերի բովանդակությունը կարող է լինել հետևյալը.

- կարճ տեղեկություններ անցյալում տեղի ունեցած ույմ մր-
ցումներից, մասնակից թիմերի համար զի կների ընդհանուր կող-
մերով բնութագրումը, տեղեկություններ մրցումների անց-
կացման հիմնական պայմանների վերաբերյալ,
- մրցումների սկիզբն ազդարարելը,
- մրցասպարեզ մուտք գործելիս կամ կանգառից հետո, մաս-
նակիցներին ներկայացնելը,

- յուրաքանչյուր մրցաձևի ավարտին աճող և անփոփոխարդյուն քննարկի ծանուցում,
- տեղեկատվական տեքստերի ընթերցումն ախտավարժանքների ընթացքում,
- պարզ և ատրման արարողության ըվերաբերող տեքստեր, որոնք կրկնվում են, սակայն հիմնականում մնում են անփոփոխ (փոխվում են միայն պարզ և ատրվող ների անունը և ազգանունը),
- մրցումների բացման և փակման շքերթներն ուղեկցող տեքստեր,
- մրցման ամենօրյա ավարտական խոսք և հաջորդ օրվա անոնս:

ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՆՎԵՐԱԲԵՐՈՂ ՏՊԱԳԻՐ ՏԵՂԵԿԱՏՎ ՈՒԹՅՈՒՆ

Տպագիր տեղեկատվության մեջ են մտնում մեկ զբնական տեղեկությունները մրցավարների, մրցումների տեղեկավարների, մարզիկների վերաբերյալ, մեկնարկային արձանագրությունները, տեղեկագրերը: Տեղեկագրերում տրվում են անհատական-թիմային և եզրափակիչ մրցումների հինչպես աճող, այնպես էլ ամփոփիչ արդյունքները:

Խոշոր մրցումներում արդյունքները հաշվում է համակարգիչը և ցուցադրվում է լուսատախտակին:

Փոքր մրցումներում որպես ցուցադրական տեղեկատվություն, խորհուրդ է տրվում տեսանելի վայրերում տեղադրել վահանակներ՝ մրցումների ընթացքը լուսաբանող աղյուսակներով:

ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՈՐԾԸ ՆԹԱՅԻՊԱՆԱԿՈՐՈՒՄԸ

Մինչն րցումներ իսկիզբը, գլխավոր մրցավարը կամ տնօրենը պետք է լավ պատկերացնեն մրցումների անցկացման ողջ գործընթացն իր մանրամասներով՝ ինչպես մրցասպարեզ պետք է մուտք գործեն մասնակիցներն ու մրցավարները, որտեղ երով պետք է անցնեն, ով մրանց պետք է ուղեկցի և ինչ հնարավոր է խոչընդոտ ինրանցը թացքը, որտեղ և ինչպես պետք է նրանք կանգ առնեն, ինչպես պետք է ներկայացնել նրանց, ինչպիսիազդանշանով և որքայլ երգով պետք է անցնեն նախավարժանքի կամ հաջորդ մրցաձևին, ինչպես և ինչ միջոցներով կիրավիրվեն վարժության կատարման և ինչպես կհաղորդվի կամ կցուցադրվի գնահատականը:

Անհրաժեշտ է հաղորդավարական տեքստի հետ միասին նախապես ընտրել նաև համապատասխան երաժշտություն, բեմական լուսավորություն և հնարավոր այլ տպավորիչ միջոց-

ներ: Մանրակրկիտ պետք է մշակել բացման, պարզևատրման և փակման արարողություններ ի մանրամասները:

Շատ կարևոր է մրցավայրում կարգապահության ապահովումը: Մասնակիցները և մրցավարները պետք է լինեն իրենց տեղերում, չաղմկեն, մի մրցաձևից մյուսը տեղափոխվեն կազմակերպված, իսկ մարզիչը օգնիրանց՝ տեղափոխելով պայուսակները կամ տաքմարզահագուստը: Կողմնակի անձանց մուտքը դաի իձ պետք է խստորեն արգելվի:

2.2 Մրցավայրը, դրան ներկայացվող պահանջները և նախապատրաստումը

ՄԱՐԶԱԿԱՌՈՒՅՑ Ի ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Մրցումների կազմակերպիչները, մարզակառույցի ղեկավարներ ի ներկայացնում են մրցման նախապատրաստական աշխատ

անքներիցանկ: Խոշորմրցումների համարառա-
ջադրվում է հետևյալ սխեման.

- ✓ մրցահարթակի կանաչագործիքների տեղադրում,
- ✓ մրցավարական, քարտուղարության և ադմինիստրա-
ցիայի գույքի տեղադրում,
- ✓ խոսափողերի, ձայնագրիչների, ձայնահզորիչ սարքավո-
րումների տեղադրում,

- ✓ մրցավարական-
տեղեկատվական սարքավորումների տեղադրում,

- ✓ հեռախոսակապի հաստատում:
Համաձայնեցվում են հետևյալ հարցերը.

- ✓ մրցավարական-
տեղեկատվական սարքավորումների ն էլեկտրական հոսանքով մա-
տակարարում,

- ✓ ձայնագրությունների նախապատրաստում,
- ✓ մրցավարական կոլեգիայի և ծառայողական սենյակ-
ների նախապատրաստում,

- ✓ մրցանակների պահպանման տեղի հատկացում,
- ✓ լուսավորության, ջեռուցման, օդափոխման և այլ համակա-
րգերի նորմալ աշխատանքի ապահովում:

Փոքր մրցումներում թվարկվածներից շատերի անհրա-
ժեշտությունը չի գագցվում: Անհրաժեշտ է միայն ստուգել մար-
զագործիքների սարքինությունը և մրությունը, հնարավորինս ազ-
ատել տարածքը ավելորդություններից, տեղադրել մրցա-
վարական սեղաններ, աթոռներ և ձայնագրիչ՝ բարձրախոսով:

ՄՐՑԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Մրցավայրի նախապատրաստական աշխատանքներին մե-
նապատասխանատու մասը՝ մրցահարթակի կանաչագործ-
ական գործիքների տեղադրումը կամ վերատեղադրումն է, ներքն

ակներհիդասավորումն է, մասնակիցներին մրցավար-
ների գույքի տեղադրումն ու տեխնիկական միջոցների տեղա-
կայումն է:

Փոքր մասշտաբի մրցումները սովորաբար անցկացվում են ու
սումնամարզական պարապմունքների համար նախատես-
ված դահլիճներում, որոնց առաստաղի բարձրությունը տղա-
մարդկանց մրցումներն անցկացնելու համար պետք է լինի 6 մ -
ից ոչ պակաս, կանանցը՝ 5 մ:
Չնայած այն բանին, որ այս տեղմարզագործիքները գտնվում են մի ե-
նց մշտական տեղերում,
այնուամենայնիվ անհրաժեշտ է մրցումներից առաջ ստուգել դրան
ցամրությունը:

Խոշոր մրցումներն անցկացվում են մասնագիտացված մարզ
ադահլիճներում, մարզապալատներում և այլն: Այս կառույց-
ները, բացի մրցահրապարակից, ունենա և տրիբունա-
ներ (Ավանցկացնելու համար 6000 նստելատեղից ոչ պակաս), մար-
զասերների
համար նախատեսված հանդերձապահարան, ճեմասրահ, բուֆե-
տ և այլն: Մասնակիցների համար ույն պես նախատեսված են լինու-
ման օժանդակ մարզադահլիճներ, հանդերձարան-
ներ, լողասենյակներ, բժշկիկոպի մզվերահսկման առանձնասեն-
յակներ և այլն: Այսպիսի մարզասրահներում մարզագործիք-
ները սովորաբար տեղադրվում են բարձր մրցահարթակին:

Մրցահարթակը՝ սպորտային արենան, նախատեսված է լույ-
թների համար: Նրավրակարող են գտնվել միայն մասնակից-
ները և մարզիչները: Բացի նախավարժանքից և ելույթնե-
րից, բոլոր նախապատրաստական գործողությունները մարզիկ-
ները կատարում են մրցահարթակից ցած:

Մրցահարթակում մի քանի տաղյաբազմաթիվ առանձին մասերի
ցբաղկացած հիմնական միջ, որոնք թույլ են տալիս ամբողջ հրապար-
ակին տալ տարբեր փոխդասավորվածու-

թյուն: Առավել հաճախ կիրառվում են 1500x
1500մմ, իսկ չհաճախ՝ 1200 x 2000մմ չափերի հիմնական խմբեր:
Մրցահարթակները լինում են 900-
1200մմ բարձրությամբ և կառուցվում են ու հարթ::

Մրցահարթակի մոտյուրաքանչյուր մրցավարի համար տե-
ղադրվում են 1000 x 2000մմ չափերի հատակից 350-
500մմ բարձրությամբ հարթակներ, իսկ վերջիններս սվրա՝ աթոռ կես
դան: Սեղանի վերին մակերեսը հարթակից պետք է բարձր լինի մեն
աքի չը 150մմ, իսկ սեղանի չափերը լինեն այնպիսին, որ տեղավոր են
մրցավարական պարագաները:

Մարմնամարզական գործիքներն իրենց կառուցվածքով, ար-
տաքին տեսքով, չափերով, կոշտությամբ և հարվածամեղ-
միչ հատկություններով, ինչպես նաև հատակին ամրացման կետեր
ի գետեղվածքով պետք է համապատասխանեն պաշտո-
նական չափանիշներին: Մինչև ունեցված ամրակշարտարևոր է, որ նրա
նք լինեն սարքին և ամուր, ունենան պատշաճ արտաքին տեսք:

Ազատ վարժությունների հարթակի (տղամարդկանց կա-
նանց) ընդհանուր տարածքը 14 x 14մ է, որից 12 x 12մ -
ը՝ սահմանազօված սպիտակ ժապավենով՝ աշխատանքային մակ-
երեսն է:

Մարմնամարզական ներքնակները պարտադիր են բազմա-
մարտիք ու զենքի համար, բացառությամբ ազատ վարժու-
թյունների: Դրանց մշակությունն է վայրէջքները դարձնել առավել
լիակալուկ և անվտանգ:

Ներքնակները պետք է ունենան որոշակի կոշտություն, իսկ մ-
ակերեսը լինի հարթ, առանց կարերի և ոչ սայթաքուն:

Թափանժույզի երկարությունը 160սմ է, լայնքը՝ 35սմ, բարձր
ությունը՝ (հատակից) 115սմ: Բռնակները, որոնց միջև կե-
ռավորությունը 40 - 45սմ է, տեղադրված են սիմետրիկ: Բռնակ-
ների բարձրությունը կազմում է 12սմ, իսկ տրամագիծը՝ 3,4սմ:

Օղակները՝ 70 սմ երկարության և 4 սմ լայնության կաշվե փոկե թուղամրացված են մետաղյա ճոպաններին, որոնք էլ կախված են 580 սմ բարձրության մետաղյա կամ արածեկան գնակներից: Օղակների բարձրությունը հատակից 280 սմ է, միմյանց միջև հեռավորությունը կազմում է 50 սմ, ներքին տրամագիծը՝ 18 սմ, հաստությունը՝ 2,8 սմ:

Հենացատկերը բաղկացած են հետևյալ հատվածներից.

վազքուղյակ - երկարությունը՝ 2500 սմ, լայնությունը՝ 100 սմ, կամրջակ -

երկարությունը՝ 120 սմ, լայնությունը՝ 60 սմ, բարձրությունը՝ 20 սմ, առգետնման հատված - երկարությունը՝ 600 սմ, լայնությունը՝ 300 սմ:

ցատկասեղանի (տղամարդկանց և կանանց) երկարությունը 120 սմ է, լայնությունը՝ 95 սմ, բարձրությունը տղամարդկանց համար՝ 135 սմ է, իսկ կանանց համար՝ 125 սմ: Ներքնակների բարձրությունը կազմում է 20 սմ:

Ձուգափայտի ծողերն օվալաձև են, որոնց ուղղաձիգ առանցքը 5 սմ է, հորիզոնականը՝ 4 սմ: Ձողերի երկարությունը 350 սմ է, իսկ բարձրությունը հատակից կազմում է 200 սմ: Վերջիններս հողավոր միացությամբ ամրացված են մետաղյա հենոցին ամրացված չորս ուղղաձիգ կանգնակների մեջ պտտվող արծյակներին: Կանգնակների միջև հեռավորությունը ըստ երկարության 230 սմ է, ըստ լայնության՝ 48 սմ:

Պտտածողը բաղկացած է

հարթ հղկված մակերեսով, 240 սմ երկարության և 2,8 սմ տրամագծով երկաթյա ծողից, որն ամրացված է հատակից 280 սմ բարձրությամբ մետաղյա զույգ կանգնակներին: Ներքնակների երկարությունը 1200 սմ է, լայնությունը՝ 300 սմ, իսկ բարձրությունը՝ 20 սմ:

Տարբեր բարձրության զուգափայտերի ծողերի երկարությունը 240 սմ է, որոնց տրամագիծը 4 սմ է: Հատակից

ներքևի ձողի բարձրությունը 170 սմ է,
վերևինը՝ 250 սմ, իսկ միմյանց միջև հեռավորությունը կազմում է 130
– 180 սմ:

Մարմնամարզական գերանի երկարությունը 500 սմ է, ուղղահ
այացի ա ստությունը՝

16 սմ, լայնակի առանցքը՝ 13 սմ, իսկ աշխատանքային մակերեսի լայ
նությունը 10 սմ է:

Բարձրու-
թյունը հատակից կազմում է 125 սմ, իսկ ներքնակներից՝ 105 սմ:

Օժանդակ գույքի թվին են դասվում.

- մագնեզիումի փոշուարկող,
- օդակների ձող կանգնեցնելու կեռաձող,
- բարձր մարմնամարզական գործիքների միասնելու տակդի

րը,

- պատվո պատվանդանը:

Ոչ մասնագիտացված դահլիճներում մարմնամարզական
գործիքները տեղադրելիս, խորհուրդ է տրվում առաջին պա-
նուն տեղադրել ազատվարժությունները և հարձր գոր-
ծիքները, իսկ բարձրերը տեղադրել ավելի հեռու՝ տեսադաշտը չփա
կելու նպատակով:

Մարմնամարզական գործիքները հատակին ամրացնելիս, կարող
են ծագել լորոշ բարդություններ, քանի

որ հնարավոր է չլինում համապատասխան փոսիկներ

և կեռիկներ: Այդ պիսիդեպքերում պտուտակների միջոցով կա-

րելի է նախ հատակին ամրացնել 30 x 30 x 4 սմ չափերի լրա-
ցուցիչ նրբատախտակի կտորներ, որոնց էլ՝ կեռիկները:

Կարող է ծագել նաև այն պիսի իրադրություն, երբ օրինակ,

թույլ չի տալ իսդահլիճի տարածքը՝

տեղադրել ազատվարժությունների հարթակը կամ հենացատկերի
վազք ուղակը, կամ էլ առաստաղից ածրի նելու պատճառով՝ կարճե
ն օղակ-

ներին տալ առկայանները: Եթե չկան առաջացած խնդիրները և-

ծելու այլ տարբերակներ, ապաստիպված մնում է մասնակիորեն խախտել ընդունված նորմերը:

Մրցավարական գույք: Բացի մարմնամարզական գործիքներից և օժանդակ գույքից, մրցավայրը պետք է կահավորվի նաև մասնակիցներին մրցավարական գույքով:

Գլխավոր մրցավարի, տեղեկատվության գծով մրցավարի և քարտուղարության սեղանները նպատակահարմար է տեղադրել լոգիկ ձևայնմասերում, որոնցից ավելի ավերևաամբողջ դիտարկել:

Մեծ դահլիճներում, որտեղ անց են կացվում միտոչոր մրցումներ, յուրաքանչյուր մրցաձևի, յուրաքանչյուր մրցավարի համար տեղադրվում են մրցավարական սեղաններ և աթոռներ: Բացի այդ, յուրաքանչյուր մրցաձևի մոտ տեղակայվում են տեղեկատվական սարքավորումներ (լուսատախտակ, կառավարման վահանակ, համակարգիչ, հեռախոս), առանց որոնց, անհնար կլինի ներմրցումների անցկացումը: Այդիսկ պատճառով, դրանց ճիշտ կիրառումը, այլևս նախափանաշխատանքի ապահովումը կարևոր նախապայման է: Մինչև մրցումները, այդ համակարգը պետք է ստուգվի համապատասխան մասնագետների կողմից, իսկ մրցավարները պետք է յուրաքանչյուր մրցումից հետո հաշվարկեն մրցումների արդյունքները: Մրցումների վայրում սաքանման համար, դահլիճի՝ նախապես ընտրված հարմար վայրերում տեղադրվում են նաև տեսախցիկներ:

